ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<1> մարտի 2016թ. N 16-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԵՎԱՆԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-ԻՆ ԿՆՔՎԱԾ N144 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 9-րդ ենթակետի, 113-րդ հոդվածի, 130-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 815-Ա որոշման և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» ստեղծելու մասին» N43-Ա որոշման պահանջները՝

կարգադրում եմ՝

1. 2016 թվականի մարտի 1-ից լուծել Վարուժան Վարազդատի Մանուկյանի հետ 2014 թվականի օգոստոսի 23-ին կնքված N144 աշխատանքային պայմանագիրը՝ ազատելով նրան Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնից և կատարել վերջնահաշվարկ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ